

Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն մեծ ուշադրու-
թյուն է նվիրել և նվիրում սոցիալիստական օրինակա-
նության ամրապնդմանը: Փորձը ցույց է տալիս, որ սո-
ցիալիստական օրինականության նվազագույն թուլացու-
մը Սովետական պետության թշնամիները ճգնում են օգ-
տագործել իրենց ստոր, քայքայիչ աշխատանքի համար:
Այդպես էր գործում պարտիայի կողմից մերկացված
Բերիայի բանդան, որը փորձում էր պետական անվը-
տանգության օրգանները դնել պարտիայի ու Սովետա-
կան իշխանության վերահսկողությունից դուրս, դրանց
վեր դասել պարտիայից ու կառավարությունից, այդ օր-
գաններում ստեղծել անօրինականության ու կամայա-
կանության մթնոլորտ: Այդ շայկան թշնամական նպա-
տակներով դեկավար ազնիվ աշխատողների և սովետա-
կան շարքային քաղաքացիների հասցնին հորինում էր
կեղծ մեղադրական նյութեր:

Կենտրոնական Կոմիտեն ստուգեց այսպես կոչված
«լենինգրադյան գործը» և պարզեց, որ դա հորինվել էր
Բերիայի և նրա արբանյակների կողմից, որպեսզի թու-
լացնեին Լենինգրադի պարտիական կազմակերպությու-
նը, արատավորեին նրա կազմերին: Պարզելով «լենին-
գրադյան գործի» անհիմն լինելը, պարտիայի Կենտրո-
նական Կոմիտեն ստուգեց նաև մի շարք այլ կասկածելի
գործեր: Կենտկոմը միջոցներ ձեռք առավ, որպեսզի վե-
րականգնվի արդարությունը: Կենտրոնական Կոմիտեի
առաջարկով անմեղ տեղը դատապարտված մարդիկ
ռեաբիլիտացման ենթարկվեցին:

Կենտրոնական Կոմիտեն այդ ամենից լուրջ հետե-
վություններ արեց: Պարտիայի և կառավարության պատ-
շաճ վերահսկողություն է սահմանված անվտանգության
օրգանների աշխատանքի նկատմամբ: Զգալի աշխա-
տանք է կատարված պետական անվտանգության օր-
գանները, դատարանն ու դատախազությունը ստուգված
կազմերով ամրապնդելու ուղղությամբ: Իր իրավունքնե-
րում լիովին վերահաստատվել և ուժեղացվել է դատա-
խազական հսկողությունը:

Անհրաժեշտ է, որ մեր պարտիական, պետական,
արհմիութենական կազմակերպությունները աշխուրջ
կերպով կանգնեն սովետական օրենքների պաշտպանու-
թյան դիրքերում, մերկացնեն և ջրի երես դուրս բերեն
բոլոր նրանց, ովքեր ոտնձգություն կանեն սոցիալիս-
տական իրավակարգի ու սովետական քաղաքացիների
իրավունքների դեմ, խստորեն կասեցնեն անօրինակա-
նության ու կամայականության նվազագույն դրսևորու-
մը:

Պետք է ասել, որ մի շարք գործերի վերանայման ու
չեղյալ հայտարարելու կապակցությամբ մի քանի ըն-
կերների մեջ որոշ անվստահություններ դրսևորվեց դեպի
պետական անվտանգության օրգանների աշխատողները:
Դա, իհարկե, ճիշտ չէ և շատ վնասակար է: Մենք գի-
տենք, որ մեր շեկիստների կազմերը իրենց գերակշռող
մեծամասնությամբ բաղկացած են ազնիվ, մեր ընդհա-
նուր գործին նվիրված աշխատողներից, և վստահում
ենք այդ կազմերին:

Զի կարելի մոռանալ, որ թշնամիները միշտ փորձել
և այսուհետև էլ կփորձեն խանգարել կոմունիզմի կա-
ռուցման մեծ գործին: Կապիտալիստական շրջապատը
քիչ լրտեսներ ու դիվերսանտներ չի ուղարկել մեզ մոտ:
Միամտություն կլինեի կարծել, թե այժմ թշնամիները
կհրաժարվեն մեզ ամեն կերպ վնասելու իրենց փորձե-
րից: Բոլորին հայտնի է, որ մեր երկրի դեմ քայքայիչ
գործունեությունը բացեիքաց պաշտպանվում և ազդա-
բարվում է կապիտալիստական մի շարք պետություննե-
րի ռեակցիոն շրջանների կողմից: Բավական է ասել, որ
ԱՄՆ-ը, 1951 թվականից սկսած, տարեկան 100 միլիոն
դոլար է հատկացնում սոցիալիստական երկրների դեմ
քայքայիչ գործունեության համար: Ուստի մենք պետք
է սովետական ժողովրդի մեջ ամեն կերպ բարձրացնենք
ռևոլյուցիոն զգոնությունը, ամրապնդենք պետական ան-
վտանգության օրգանները:

Մեր պարտիայի մեծագույն պատմական նվաճումն
այն է, որ սոցիալիստական կարգի պայմաններում աճել
են նոր մարդիկ, կոմունիզմի ակտիվ ու գիտակից կառու-
ցողներ: Սակայն ճիշտ չէր լինի կարծել, որ մարդկանց
գիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկներին առ-
դեմ վերջ է տրված: Մեր հիանալի, աշխատասեր սովե-
տական ընտանիքում, դժբախտաբար, դեռևս հանդիպում
են այնպիսի անձինք, որոնք չեն մասնակցում արտա-
դրողական աշխատանքին, օգտակար աշխատանք չեն
կատարում ո՛չ ընտանիքում, ո՛չ էլ հասարակության
մեջ: Հանդիպում են նաև այնպիսի անձինք, որոնք շա-
րամատրեն խախտում են սոցիալիստական համակեցու-
թյան կանոնները: Առանց իրենց՝ մասսաների մասնակ-
ցության, միայն վարչական միջոցառումներով հնարա-
վոր չէ վերջ տալ այդօրինակ այլանդակ երևույթներին:
Այստեղ մեծ դեր է պատկանում հասարակայնության
նր, Հարկավոր է ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ
վարքի նորմաները, սովետական բարոյականության
սկզբունքները խախտող մարդիկ զգան, որ իրենց ա-
րարքները դատապարտվում են ամբողջ հասարակության
կողմից: Անսասան պետք է լինի մեր Կոնստիտուցիայի
ամենահիմնական դրույթներից մեկը. «Աշխատանքը
ՍՍՌՄ-ում աշխատանքի ընդունակ յուրաքանչյուր քա-
ղաքացու պարտականությունը և պատվի գործն է՝ հա-
մաձայն «Ով չի աշխատում, նա չի ուտում» սկզբունքի»:

Պարտիական, սովետական, կոմերիտական և արհ-
միութենական կազմակերպությունների անխախտելի
պարտականությունն է ակտիվորեն ազնիվ աշխատանք
կատարել դեպի աշխատանքը և հանրային սեփականու-
թյունը սովետական երիտասարդությանն ու բոլոր աշ-
խատավորներին սոցիալիստական վերաբերմունքի ոգով,
մարքսիզմ-լենինիզմի մեծ գաղափարների ոգով դաս-
տիարակելու ուղղությամբ:

Ընկերներ: Հետևողականորեն վարելով խաղաղասի-
րական քաղաքականություն, մեր պարտիան իր կարևո-
րագույն պարտականությունն է համարում անդով կեր-
պով ամրապնդել Սովետական պետության քաջարի,
փառքով պսակված Զինված Ուժերը՝ մեր բանակը, նավա-